# ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Օգոստոսի 6-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Կոմիտաս վրդ. Հովնանյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

**Օգոստոսի 12-ին շաբաթ.—Տոն Ծողակաթի Ս. Էջմիածնի ըստ տեսլեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Մայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

**Օգոստոսի 13-ին, կիրակի.—ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

«Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

* * *

**Օգոստոսի 14-ին, երկուշաբթի.—ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

**Օգոստոսի 20-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Անանիա եպս. Արաբաջյանը:

«Հայր մեր»-ից առաջ Գարեգին Վեհափառը հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի մահվան առաջին տարելիցի:

*
* *

**Օգոստոսի 27-ին, կիրակի.—Տոն Գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը: «Հայր մեր»-ից առաջ Ներսես սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Սեպտեմբերի 3-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, իր անդրանիկ ս. պատարագը մատուցեց Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը և հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Սեպտեմբերի 10-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Սեպտեմբերի 17-ին, կիրակի.—ԽԱՉՎԵՐԱՑ:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանը:

«Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Սեպտեմբերի 18-ին, կիրակի.—Յիշատակ մեռելոց:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Փրանկյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

*
* *

**Սեպտեմբերի 24-ին, կիրակի:**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն: